

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

21.09.2021

Սիրելի՛ սյունեցիներ

Բարդ ու դժվարին ժամանակներում ենք դիմավորում Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակը: Գրեթե մեկ տարի առաջ մեզ պատուհասած պատերազմի տարելիցը կյրակա շուտով...

Բայց, թե՛ 30-ամյա մեր անկախ պետականության ճանապարհի, թե՛ 2020-ի աշնան պատերազմի դասերը գալիս են հուշելու, որ ինքնիշխանություն ունենալու մեր իրավունքի համար պայքարն ամեն պահ ու անընդհատ շարունակվում է, որ պետք է ամուր պահել ու փայփայել հայրենիքի համար գերագույն արժեք անկախությունը:

Այդ դասերից ամենակարեւորը մեր միասնականությունն է, որով պիտի դիմագրավենք մարտահրավերները, որոնք հայոց պետականության կերտման ընթացքում թվում են չավարտվող ու նահանջել չեն պատրաստվում:

1991-ին ՀՀ-ի անկախությունը հռչակելու, հետագայում այն պահելու համար, ինչպես նաեւ մեկ տարի առաջվա գոյապայքարում հազարավոր հայորդիների արյուն հեղվեց...

Սեպտեմբերի 21-ի տոնին՝ հավերժ փառք նրանց հիշատակին ու մեր խոնարհումը՝ նրանց շիրիմներին, շնորհակալություն՝ նորանկախ Հայաստանի համար մղված բոլոր պատերազմներով անցած ու մեր կողքին ապրող հերոսներին: Նրանք մեր երիտասարդ պետության պատմության կենդանի էջերն են...

Մեր պայքարը չի ավարտվել, ուստի, շնորհավորելով բոլորիս, նաեւ խնդրանքս է՝ նվիրումով ծառայենք մեր սիրելի հայրենիքին, ամենքս՝ մեր ոլորտում ու պատասխանատվության չափով: Մենք ուժեղանալու, զարգանալու, նոր հաղթանակներ կերտելու պարտք ունենք ընկածներին, պարտք ունենք նաեւ գալիք սերունդներին ժառանգել հնարավորինս խաղաղ արարումի ու երջանիկ հայրենիք, մայրական ցավից ու արցունքից զերծ Հայաստան, իսկ դա պետք է անենք՝ նախելառաջ ապավինելով մեր բազկի ու մտքի ուժին: Նաեւ դրանով պիտի վերահաստատենք այս հողի վրա հարատեւելու մեր կամքը:

Բարի՛ ծառայություն ու աննկուն ոգի եմ մաղթում սահմանին կանգնած մեր զինվորներին, բարեկեցություն ու անվտանգություն եմ ցանկանում բոլորիդ օջախներին, խաղաղություն ու հզորացում՝ Հայաստանի անկախ Հանրապետությանը: